

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2019 թ. ապրիլի 29-ի նիստի (արձանագրություն N10)

1. Հաստատել և գործողության մեջ դնել հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ժէ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության ուսումնական պլանը:

1.1 ժէ.00.01 «Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն» մասնագիտության հայցորդների համար ուսման տարեկան վարձը սահմանել 250 000 ՀՀ դրամ:

2. Հաստատել «ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրայի 2019-2020 ուս. տարվա առկա ընդունելության կանոնակարգը»,

2.1 լրացուցիչ քննարկել մագիստրատուրայի ընդունելության երկրորդ փուլում ՄՈԳ-ի անցողիկ շեմ սահմանելու հարցը և արդյունքների մասին զեկուցել ԳԽ հաջորդ նիստում:

3. Հաստատել և ս.թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ դնել «ԵԹԿՊԻ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ»-ը:

3.1 հանձնարարել ամբիոնների վարիչներին սույն կարգի բովանդակությանը ծանոթացնել դասախոսական կազմին և հանձնարարել կազմել և ամբիոն ներկայացնել իրենց դասընթացների գնահատման բնութագրիչները:

4. Հանձնարարել ՈԱԿ-ին վերանայել ԵԹԿՊԻ-ի որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովի ԳԽ քննարկմանը ներկայացված կազմը՝ հաշվի առնելով քննարկման ընթացքում արված առաջարկները,

4.1 Ն. Սարգսյանի զեկույցն ընդունել ի գիտություն,

4.2 հանձնարարել ամբիոնների վարիչներին տասնօրյա ժամկետում վերանայել գործող առարկայական նկարագրերը և ներկայացնել դրանց պարզեցմանն ուղղված առաջարկներ:

Գիտքարտուղար՝

Գ. Հովհաննիսյան